ՀԱՅԱԳԻՏ ՄԱՐՔՎԱՐՏ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

I

Եւրոպացի արդի սակաւաթիւ հայագէտների շարքում առաջին տեղերից մէկն է գրաւում պրոֆեսոր Դ–ր Եոզէֆ Մարքվարտ (Prof. Dr. Joseph Marquardt կամ, ինչպէս վերջերս նա տառադարձում է իր ազգանունը, Markwart), որ տարիներից ի վեր գրաւում է Բերլինի համալսարանի պարսկագիտութեան եւ հայագիտութեան ամբիոնը:

Այս երկու ճիւղերում էլ նա համարւում է աշքառու դէմք, ոչ միայն որպէս ուսուցչապետ, այլ եւ որպէս հեղինակ մի շարք ուսումնասիրութիւնների:

Ներկայ յօդուածը նպատակ ունի «Հայրենիք»–ի ընթերցողներին ամփոփ տեղեկութիւն տալ Մարքվարտի հայագիտական աշխատութիւնների եւ մասնաւորապէս նրա վերջին՝ «Հայ Ազգի Ծագումը եւ Վերականգնումը» գործի մասին, որ թէեւ լոյս է տեսել դեռ տարիներ առաջ (1919–ին), բայց մինչեւ օրս գրեթէ անծանօթ է մնացած ընթերցողների լայն շրջանակի:

Նախ՝ մի քանի խօսք պրոֆ. Մարքվարտի կեանքից:

* * *

Մարքվարտ ծնուել է 1864 թուականի դեկտեմբեր 9–ին Վիւրթեմբերգում (Հարաւային Գերմանիա): Ուսանողական տարիները անց է կացրել համալսարանական փոքրիկ Տիւբինգէն (Tuebingen) քաղաքում, հետեւելով աստուածաբանական (կաթոլիկ) դիտութեան, ինչպէս նաեւ արեւելեան ու դասական լեզուներին: Հայերէն սովորել է պրոֆ. Ֆեստէրի մօտ:

Համալսարանը աւարտելուց յետոյ մի որոշ միջոց մասնաւոր–գիտական քարտուղարի պաշտօն է կատարել Prof. Prym–ի մօտ, որից յետոյ սկսուել է նրա ուսուցչական գործունէութիւնը գերման համալսարաններում:

1897–ից մինչեւ 1900 որպէս մասնաւոր դասախօս (Privat Dozent) նա պաշտօնավարել է Տիւբինգէնի համալսարանում, աւանդելով Հին Պատմութիւն, իսկ 1900–ից մինչեւ 1911 թուականը պաշտօնավարել է Լայդենի (Leiden, Հոլլանդիա) Ազգագրական Թանգարանում:

1912–ին Մարքվարտ տեղափոխւում է Բերլին որպէս պարսկերէնի եւ հայերէնի ուսուցչապետ, ուր եւ մինչեւ օրս շարունակում է իր դիտական գործունէութիւնը: Իր այս պաշտօնի մէջ Մարքվարտ յաջորդն է հռչակաւոր լեզուաբան եւ հայագէտ պրոֆ. Նիկ. Ֆինկի, որ մեռաւ գրեթէ երիտասարդ տարիքում: Նրա ղեկավարութեամբ է լոյս տեսել մի երկու տարի, ինչպէս յայտնի է, գերմաներէն «Հանդէս Հայագիտութեան»–ը (Zeitschrift fuer die Armenische Philologie):

Մարքվարտ բանասէր–պատմաբան է: Նրա հայագիտական ուսումնասիրութիւններն էլ չօշափում են բանասիրական–պատմական հարցեր: Պակաս կարեւորութիւն չեն ներկայացնում նաեւ նրա պարսկագիտական ուսումնասիրութիւնները մանաւանդ «Հետազօտութիւններ Իրանի Պատմութեան Շուրջը» Untersuchungen zur Geschichte Irans, 1905), ինչպէս նաեւ Osteurop. und Ostasiatische Streitzuege" (1903) գործերը, որոնք հայ պատմագիտութեան համար եւս ներկայացնում են մեծ շահեկանութիւն:

Մարքվարտի առանձին հատորներով լոյս տեսած հայագիտական գլխաւոր գործերն են. 1) «Երանշահր», (Eranschahr), 2) «Հայերէն Այբուբենի Ծագման Մասին» (Ueber den Ursprung des Armenischen Alphabets) 3) «Հայ Ազգի Ծագումը եւ Վերականգնումը» (Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation):

Այս աշխատութիւնները լոյս են տեսած գերմաներէն լեզուով, երկրորդը նաեւ՝ հա-